

114  
ՀԱԼԵՐ

578-a

381

6395-

# ԳԵՅՋԿՈՒՀՈՒՇ



Ա. ԶԱՎԱԲԵՐԴ

ՄԻՍԱԿՈՐ

ԳՅՈՒԶՈՒՄ







Հրատարակողի անունը, միայն

Հ. Խ. Ս. Հ. ԵԹՈՂՋԵՊԵՆՈՒԹՅՈՒՆ ԺՈՂՈՎԳԵՐԿԱՆ ԿՈՄԻՍՏԵՐԻՆ  
ՄՈՐ ՅԵՎ ՄԱՆԿԱՆ ՊԱԶՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

ՆՎԵՐ ԳԵՂՋԿՈՒՅՈՒՆ



Հրատարակություն Առժողովրդային

ՅԵՐԵՎԱՆ  
1926 թ.

A  $\frac{I}{8521}$

18-355-



Գրառ. № 384 ա. Տիրաժ 2000. Պատ. № 2516.  
Տպագրական տրեստի 2-րդ տպարան, Յերևան



## ԻՆՉՈՒ ՅԵՆ ՄԵՌՆՈՒՄ ԿԱՆԱՅԲ ԾՆՆԴԱ- ԲԵՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Ծննդաբերությունը հիվանդությունն չէ, այլ բնական յերեվույթ, ուստի կինը նրանից չպետք է մեռնի:

Սակայն, մենք հաճախ տեսնում ենք, վոր ծննդաբերությունից զոհվում են մեծ թվով յերիտասարդ և առողջ կանայք, մանավանդ գյուղերում:

Բնական է, վոր մոր հետ միասին զոհվում են այն փոքր մանուկները, վորոնք մնում են առանց մոր կաթի, մոր գուրգուրանքի և խնամքի:

Ռուսաստանի վիճակագրությունը, դեռ հին կարգերի ժամանակ, ցույց է տալիս, վոր մոտավորապես ամեն 200 ծննդկանից մեկը մեռնում է:

Բացի դրանից, լինում են բազմաթիվ դեպքեր, յերբ կինն անհաջող ծննդաբերությունից ստանում է հիվանդություն, վորը դարձնում է նրան հաշմանդամ՝ նա միշտ դանդատվում է փորի ցավից, դժվարանում է աշխատել և բացի դրանից, նա դառնում է անբեր:



Աշխատենք թվել ու պարզել, թե վորոնք են ծննդկանի մահվան և հիվանդության պատճառները և ցույց տանք՝ թե ի՞նչ միջոցներով կարելի յե նրանց առաջն առնել:

Մենք սկզբում առաջինը, վոր կինը չպետք է մեռնի ծննդաբերությունից: Իսկապես, բժշկական գիտությունը հիմա այնքան է զարգացել և առաջ գնացել, վոր հնարավոր է ծննդկանների մահացության դեմ կռվել ու ծննդաբերությունից գոյացած ծանր հիվանդությունների առաջն առնել:

Այդ կարելի յե ապացուցել նրանով, վոր այն յերկրներում, վորտեղ ժողովուրդն ավելի կրթված է, վորտեղ չկան անդրադետներ, չկան և անդրադետ հետամնաց կանայք, վորտեղ գործում են միայն պատրաստված մանկաբարձուհիներ և վոչ տգետ տատմայրներ, — այնտեղ ռաս սակավ է պատահում, վոր ծննդաբերությունից մեռնողներ լինեն:

## ԾՆՆԴԿԱՆՆԵՐԱԿԱՆ ԶԵՐՄ

Ծննդկանները գլխավորապես մեռնում են — ծննդաբերական ջերմից. 100 ծննդկաններից՝ մոտավորապես 7-ը հիվանդանում են այդ ջերմով:



Ծննդկանի այդ լուրջ հիվանդությունն առաջ է  
գալիս կեղտոտությունից:

Ծննդաբերության ջերմի նշաններն են՝  
դող, սաստիկ ջերմ, սեռական մասերը ծած-  
կվում են մոխրագույն փառով, արգանդի արտա-  
դրությունը դարձահոտ է լինում:

Բայց ինչո՞ւ կեղտոտությունը այդքան վսան-  
գավոր է ծննդկանի համար:

Մեզ համար պարզ է հասկանալի պետք է  
լինի, Վոր ազատվելու ժամանակ սեռական մա-  
սերը վնասվում են, նոցա զանազան տեղերում  
գոյանում են պատվածքներ, մանր վերքեր,  
բացի դրանից, արգանդի ներսում՝ ընկերքի  
ընկնելուց հետո մնում է մի մեծ վերք, իսկ մեզ  
հայտնի յե, Վոր ամեն վերքի համար կեղտոտու-  
թյունը ռաս վնասակար է: Ահա, ծննդկանի այդ  
բաց վերքերը հեշտությամբ վարակվում են կեղ-  
տոտությունից:

Բացատրվում է այդ նրանով, Վոր կեղտի  
մեջ միշտ լինում են ալակեռ կոչված մանրե-  
ներ (միկրոբներ) — շատ փոքր և վնասակար կեն-  
դանիներ, Վորոնք անգեն աչքով չեն յերևում,  
բայց Վորոնք տեսանելի յեն հատուկ ապակիներ-  
ի (մանրադիտակի) միջոցով: Այդ մանրենները



կաշելով ծննդկանի սեռական մասերի վերքերին՝  
այնտեղից տարածվում են նրա արյան մեջ և  
առաջացնում արյան վարակում, վորը, մեծ մա-  
սամբ, վերջանում և մահով:

## ԻՆՉՊԵՍ ԽՈՒՍԱՓԵԼ ԾՆՆԴԱԲԵՐԱԿԱՆ ՋԵՐՄԻՑ

Գիտնալով այդ, ծննդկանին շրջապատող-  
ները պետք և ծննդկանի շուրջը պահպանեն  
խիստ մաքրություն:

Դժբախտաբար այդ բոլորը չի արվում, մա-  
նավանդ հետամնաց գյուղերում, վորտեղ դեռևս  
կան այնպիսի նախապաշարումներ, վորոնց շնոր-  
հիվ ծննդկանը համարվում և «հարամ» և ուստի  
յերբ կնոջ ծննդաբերության ցավերն սկսվում  
են, նրան արգելում են մնալ բնակարանում,  
տեղափոխում են գոմ և պսակեցնում գետնի  
վրա կեղտոտ շորերի և փալանների մեջ:

Այդպես վարվելով շրջապատողներն անգի-  
տակցաբար մեծ հանցանք են գործում այդ  
կնոջ դեմ:

Մեզ կարող են առարկել, չե՞ վոր բոլոր  
գեղջկուհիները ազատվում են այդ պայմաննե-



րուժ և չեն մեռնուժ: Բայց մենք կպատասխա-  
նենք, վոր վոչ մի ծննդկան չպէժ է մեռնի  
մեր անփույթ յեվ անբարեխիղճ վերաբերմուն-  
քի շնորհիվ, մանավանդ, վոր մենք գիտենք դրա  
հետևանքների մասին:

Վորպեսզի պահպանենք ծննդկանին ծննդա-  
բերական ջերմից, պետք է այնպես անել, վոր-  
պեսզի նրա սեռական մասերին չկպչի կեղտոտ  
սպիտակեղենների, շորերի և մանավանդ տգետ  
տատմոր կեղտոտ ձեռքերի վարակը:

Այն կանայք, վորոնք ծննդկանին ոգնու-  
թյուն են հասցնում, պետք է մաքուր հագնված  
լինեն, ցանկալի յե, վոր նրանց հագուստը լինի  
լվացվող կտորից (վոչ բրդյա) և կարճ թևերով:  
Նրանց յեղունգները պետք է կարճ կտրած լի-  
նեն (յերկար յեղունգների տակ թագնված է լի-  
նում վարակ), ձեռքերը՝ խոզանակով, սապոնով  
և տաք ջրով առնվազն 5 րոպե լվանան, — ապա  
միայն այդպես լվացած ձեռքերով — առանց մի  
այլ բանի ձեռք տալու, անգամ սրբիչին, մոտե-  
նան ծննդկանին:

Ծննդկանի համար չպէժ է խնայել վոչ  
սապոն յեվ վոչ մաքուր սպիտակեղեն յեվ ան-



կողին և չպետք է ասել «միևնույն է, արնոտ  
կդառնա, ամառն է»:

Միայն մաքուր խնամելով ծննդկանին՝ մենք  
կատարած կլինենք բժշկության բարձր պահանջը  
«Առաջինը — վնաս չտալ»:

## **ՏԱՏՄԱՅՐՆԵՐԸ ՎՆԱՍ ԵՆ ՏԱԼԻՍ ԾՆՆԴԿԱՆԻՆ**

Պատահում է վոր ծննդաբերությունը քիչ  
բարդանում է, յերկար է տևում, ուստի պա-  
հանջվում է բժշկի ոգնությունն և միջամտու-  
թյունը. իսկ փոխարեն բժշկին անմիջապես հրա-  
վիրելու, գյուղերում հաճախ դիմում են տա-  
մորը, վորի շնորհիվ դրությունն ավելի բար-  
դանում է, վորովհետև իսկական ոգնությունը  
ժամանակին չի հասնում և միևնույն ժամանակ  
այդ տգետ տատմոր ձեռքով կատարած «ոգնու-  
թյունը» ավելի ևս վնասում է ծննդկանին:

## **ՅԵՐԵԽԱՅԻ ԴԻՐԲԸ ԾՆՆԴԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ**

Բոլորին հայտնի յե, վոր սովորաբար սկըզ-  
բում ծնվում է յերեխայի գլուխը (ծոժրակով  
առաջ). 100 ծննդաբերությունից 97-ը լինում է









ԵՏԱՄԷԱՅ

ԳՅՈՒՉՈՒՄ.



ՆԱԵՐ

ԳԵՅՋԿՈՒՀՈՒՇ



Ա. Գ. ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՄԻՍԱԿՈՐ

ԳՅՈՒԶՈՒՄ.







այդպէս: Ավելի սակավ (100-ից 2 դեպք) ծըն-  
վում եւ սկզբում յերեխայի հետեւը (առանձին  
կամ վտարերի հետ միասին), իսկ հազվագյուտ  
դեպքերում՝ յերեսը: Այդ դիրքի վերջին յերկու  
տեսակները թեւ համարվում են անկանոն, սա-  
կայն փորձված մանկաբարձուհին կարող եւ կնո-  
ջը հաջողութեամբ ոգնություն հասցնել:

Վսանգաւոր եւ համարվում յերեխայի այն-  
պիսի դիրքը, յերբ սկզբում յերեւում եւ յերեխա-  
յի ուսը կամ ձեռքը: Նման դրությունը անպայ-  
ման պահանջում եւ բժշկի շուտափութ ռզնու-  
թյուն: Կինն յուր ուժերով չի կարող ազատվել:  
Յեթե այդպիսի դեպքում բժիշկը ժամանակին  
եւ հասնում, նա հաջողութեամբ ուղղում եւ յերե-  
խայի դիրքը եւ փրկում թե յերեխայի եւ թե մոր  
կյանքը: Յեթե բժիշկը քիչ ուշ եւ հասնում, այլ-  
ևս հնարավոր չի լինում յերեխայի դիրքն ուղ-  
ղել, — յերեխան արգանդում յերկար մնալուց  
մահանում եւ եւ բժիշկն ստիպված եւ լինում  
կտրատել արդեն մահացած յերեխային եւ ազա-  
տել մորը: Իսկ յեթե ոգնությունը շատ եւ ուշա-  
նում, արդեն անհնարին եւ լինում փրկել եւ մոր  
կյանքը, վորովհետեւ արգանդն արդեն պատը-  
ված եւ լինում:



## ԿՆՈՋ ՆԵՂ ԿՈՆՔԸ

Անհաջող ծննդաբերությունը հաճախ լինում է կնոջ կազմվածքից, այսինքն յերբ նրա վուկրային կոնֆի ծավալը փոքր է լինում, կոնքը նեղ է և նա թույլ չի տալիս յերեխային կոնքից դուրս գալու:

Ժամանակին հրավիրված բժիշկը հանում է յերեխային գործիքներով, իսկ յերբեմն ել ստիպված է լինում (յերբ կոնքը չափազանց նեղ է), դիմել ավելի լուրջ վիրահատության (ոպերացիա)՝ կտրել փորը և հանել յերեխային:

Բայց ինչպես իմանալ, վոր կնոջ կոնքը նեղ է և նա չի կարող կենդանի յերեխա ծնել: Առհասարակ նեղ կոնքով կանայք լինում են՝ կաղերը, սապասալորները (կուզիկները), կարճահասակները, անչափահասները: Այդպիսիները, վորպեսզի ծննդաբերության ժամանակ չենթարկվեն վտանգի, պետք է նախօրէն ամուսնանալը դիմեն բժեկի խորհրդին՝ թե արդյոք նրանց կազմվածքը չի խանգարում ծննդաբերությանը: Իսկ յեթե այդպիսիները արդեն հղիացած են, այդ դեպքում նրանք պետք է ժամանակին դիմեն բժշկին:



## ԱՐՅՈՒՆՀՈՍՈՒԹՅՈՒՆ

Բոլորին հայտնի յե, վոր կինը ազատվելիս միշտ արյուն ե կորցնում, բայց յերբեմն արյան քանակն այնքան շատ ե լինում, վոր դառնում ե սաստիկ արյունհոսություն, վորը հաճախ կարող ե ծննդկանի մահվան պատճառ դառնալ: Իսկ գիտցող մարդու համար արյունհոսությունը շատ հեշտ ե դադարեցնել: Սովորաբար արյունհոսության պատճառը լինում ե ընկերքի դուրս գալու ուշացումը: Չպետք ե թույլ տալ, վոր ընկերքն ուշանալիս պորտալարի մորական մասին կապեն մաշիկ կամ մի այլ ծանր բան, կամ վոր տատմայրները պորտալարը ձգեն ուշացած ընկերքը դուրս հանելու համար: Մաշիկ կապելը կամ պորտալարի ձգելը միշտ ել վնասում ե ծննդկանին և կեղտոտում նրան:

Այս վնասումները միշտ առաջացնում են արյունհոսություն կամ բորբոքում, իսկ սրանց հետևանքը լինում ե ծննդկանի մահը:

## ՀԻՎԱՆԴ ԿՆՈՋ ԾՆՆԴԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Հիվանդ կանանց վրա շատ վատ ե անդրադառնում թե հղիությունը և թե ծննդաբերու-



թյունը, և նրանց հիվանդությունն ավելի ևս  
սաստկանում է ու բարդանում: Այդ հիվանդու-  
թյուններն են՝ թոքախտ, սրտի արատներ, ծա-  
նրը տեսակի մալարիա (դողերոցը), յերիկա-  
մունքների բորբոքում և այլն: Այդպիսի դեպքե-  
րում յերբեմն բժիշկը վռնչով չի կարող ոգնել:  
Այդ ցույց է տալիս, վոր չափազանց կարևոր է,  
վորպեսզի ամեն մի հղի կին՝ յերբ իրեն վատ է  
զգում, անմիջապես դիմի բժեկին, վորպեսզի  
հնաշավոր լինի վաղորոք միջոցներ ձեռք առ-  
նել: Այս դեպքերում կնոջ դրուժյունն յերբեմն  
այնպես է լինում, վոր անհրաժեշտ է դառնում  
կնոջ կյանքը փրկելու համար—կատարել վիժե-  
ցում:

## Ե Կ Լ Ա Մ Պ Ս Ի Ա

Կա մի շատ լուրջ հիվանդություն, վորը  
կոչվում է եկլամպսիա, վորով հղի կանայք և  
ծննդկանները հաճախ հիվանդանում են: Այդ  
հիվանդությունը մեծ մասամբ լինում է առա-  
ջին ծննդաբերության ժամանակ և դրա համար  
ել դրանից հատկապես զոհվում են յերիտասարդ  
կանայք: Եկլամպսիայով հիվանդ կանայք հան-



կարծ ընկնավորի նման են դառնում, ուշագնաց են լինում, կծկվում են նրանց ձեռքերը, վտա-  
քերն և ամբողջ մարմինը, շրթունքները կապ-  
տում են, բերանը փոփռում է, մեզը կապվում է:

Նախքան այդպես հիվանդանալը այդ կա-  
նայք ունենում են յերկամունքների բորբոք-  
ման նշաններ, այսինքն՝ վտաքերի ուռուցք և  
գլխացավ: Նրանց մեզի մեջ կա սպիտ, վորը չի  
լինում առողջ մարդու մեզի մեջ:

Ուրեան այդ եկամպսիայի առաջն ի՞նչպես  
առնել:

Այդ հիվանդությունից խուսափելու համար  
հղի կինը մի քանի անգամ պետք է դիմի բժշ-  
կին կամ մանկաբարձուհուն, մանավանդ հղիու-  
թյան վերջին 2-3 ամսվա ընթացքում. նա պետք  
է ուղարկի ֆննելու իրեն մեզն և լուրջ ուշա-  
դրություն դարձնի վոսֆերի կամ յերեսի ուռուց-  
քի վրա:

Ժամանակին ստացած բժշկական խորհուրդ-  
ները՝ կաթնային դիետան, վաննաներն և այլն  
կանխարգելում են այդ սարսափելի հիվանդու-  
թյունը, վորն սպանում է թե մորը և թե յերե-  
խային:



Ուրեմն մենք թվեցինք ծննդկանի մահվան  
գլխավոր պատճառներն և տեսանք, վոր մենք  
բժշկական և մանկաբարձական ուժերով կարող  
ենք կռվել այս մահացության դեմ:

Մեր ասածներից բոլորն է հետևյալը.

1) Պահպանել ամենախիստ մաքրություն  
ծննդկանի շուրջն և ապահովել նրան վարակիչ  
հիվանդություններից.

2) Չդիմել տատմայրներին, այլ մանկաբար-  
ձուհիներին, իսկ դժվար դեպքերում անմիջապես  
հրավիրել բժշկին.

3) Ամեն մի հղի կին պետք է դիմի բժըշ-  
կին, մանավանդ յերբ ուռչում են վտաքերը կամ  
յերբ նշաններ կան կասկածելու՝ վոր կոնքը  
նեղ է.

4) Նախքան ամուսնանալն, աղջիկները  
պետք է դիմեն բժշկին իմանալու համար, թե  
արդյոք նրանց առողջությունն և կազմվածքը  
թո՛ւյլ են տալիս նրանց մայր լինելու:

5) Աշխատել գյուղերում ամենուրեք կռվել  
տատմայրների գործունեյության դեմ և ունենալ  
նրանց փոխարեն մանկաբարձական ոգնություն:



## ԻՆՉՊԵՍ ԿԱՐՈՂ ԵՆ ԳԵՂՋԿՈՒՅԻՆ ՅԵՎ ՊԱՏ- ԳԱՄԱՎՈՐՈՒՅԻՆ ԼԻՆԵԼ ՈԳՏԱԿԱՐ

Ի հարկե ընթերցողը, մանավանդ գեղջկու-  
հի ընթերցողը կարող ե ասել — թե այդ բոլորը  
անհնարին ե իրականացնել մեր կյանքում, վո-  
րովհետև մենք գյուղում չունենք բավականին  
բժշկական և մանկաբարձական ոգնություն:

Այո, հիմա թերևս իրավունք ունեք Դուք  
այդ ասելու. բայց չե՞ վոր Դուք, գեղջկուհիներ,  
և մանավանդ, Դուք, պատգամավորուհիներ, իրա-  
վագուրկ չեք Խորհրդային Հայաստանում: Ոգ-  
տվեցե՞ք Ձեր ձայնի իրավունքից գյուղխոր-  
հուրդներում, գործկոմներում, փոխոգկոմներում:  
Հարց հարուցեք կանանց և յերեխաների կարիք-  
ների մասին: Մասնավորապես բարձրացրե՞ք  
մանկաբարձական ոգնության բարելավման խըն-  
դիրը: Ուղարկեցե՞ք Ձեր գեղջկուհիներին քաղաք  
սովորելու մանկաբարձական դպրոցներում: Տա-  
րածեցե՞ք կանանց մեջ սանիտարական լուսավո-  
րություն առողջապահական սեկցիաների և  
առողջապահական բժիշկների միջոցով: Կովեցե՞ք  
նախապաշարուհիների և անտախտապաշտությունների  
դեմ, վորպեսզի ծննդկանի դժվար ընկերներում




չդիմեն սրբին, աղոթքին «չար աչքի» դիպածը  
 վոչնչացնել, այլ դիմեն գիտական բժշկական  
 ոգնության: Պատգամավորուհիներ, ոգնեցեք հղի  
 կանանց և ծննդկաններին նրանց տնտեսական  
 աշխատանքի մեջ և մի թույլ տաք, վոր նրանք  
 կատարեն ծանր աշխատանքներ հղիության ըն-  
 թացքում, վոր ծննդաբերությունից հետո սահ-  
 մանված ժամանակից շուտ չանցնեն աշխատան-  
 քի: Կովեցեք կանանց մեջ յեղած անդրադիտու-  
 թյան դեմ, ստեղծեցեք նոր և առողջ կենցաղ:

Յեվ կատարելով այդ բոլորը, Դուք իրոք  
 կապահովեք մեր յերիտասարդ հղի կանանց և  
 ծննդկաններին մահվան և հիվանդության վտան-  
 գից ու կը կրճատեք մեր վորբերի թիվը:

Այս գործում Դուք միշտ կը գտնեք համա-  
 կրանք, աջակցություն և ոգնություն Հայաս-  
 տանի Առողջապահության Կոմիտեարիատի կող-  
 մից, վորը Մարտի 8-ի որվա առթիվ նվիրում է  
 այս փոքրիկ գրքույկը Հայ գեղջկուհիներին:

1258  
 A





ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0045154



A<sup>I</sup><sub>8571</sub>

(064)



ՀԵՏԱՄԷԱՅ

ԳՅՈՒՂՈՒՄ